դիր։ Ըստ աւանդութեան, կը պատմուի թէ հրեշտակ-ները լուսեղէն դաստառակով կը բերեն սուրբին Գը-լուխը «առաջի Ս. Աստուածածնի և Ս. Յակոբ Տեառն-եղբօր և Ս. Յովհաննու Աւետարանչի» և ասոնց ձեռ-քով այստեղ կ'ամփոփուի, ինչպէս գրուած է Յայս-մաւուրքի մէջ (փետրուար) (Հան. էջ 87–88)։

Գլխադիրի մատրան մօտ կայ Ս. Ստեփանոսի մատուռը որ շինուած է եկեղեցիին հիւսիսային դրան վրայ, ըստ աւանդութեան՝ Կիլիկեցի մեր թագաւոր-ներէն. հոն կը կարդացուի ամէնօրեայ Յայսմաւուրքը և հանդիսի օրուան աւետարանը (Հան. էջ 88)։ Այս եկեղեցիին մէջ կը գտնուի այն մեծ աւազանը, ուր Կիւրղի Երուսաղէմի հայրապետին օրով, երբ Ս. խաչը Մայիս 7 ին լուսակերպ տեսիլքով երևցաւ Զիլթենեաց լեռնէն մինչև Գողգոթա, և Սուրբը մկրտեց առաւել քան հարիւր հազար հրեաներ։ Աւանդութենէ նախ-նեաց մայիս 7 ին կը կատարուի այս աւազանին պան-ծացումը մասնաւոր հանդիսութեամբ (Հան. էջ 89(*))։

(*) Հեթանոսներէն եւ հրեաներէն հարիւրներով մկրտուեցան, այն-պէս որ աւազանները անբաւական գալով՝ Ս. Կիւրեղ հրամայեց արբել հաստակաց բաղնիքը եւ նորադրձները հոն մկրտել (**Ճառ-ընտիրք**)։

Այժմ Ս. Կիւրեղի տօնին առաւօտուն, Ս. Յակոբեանց Տաճարի Ս. Ստեփանոսի աւանդական Ս. Կիւրեղի սեղանին մօտ՝ որուն տակը կը զտնուի աւազանը, հանդիսաւոր կերպով կ'երգուի օրուան **մանկունքը** եւ «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքը։

Նոյն կռածոյ աւազանը շինուած է **միզի** կոչուած քարէ, որ Ս. Կիւրեղ հայրապետին անունով կանգնուած սեղանին վէմը կը կազմէ։ Անոր խորութիւնն է տասնեւվեց մատնաչափ ու տրամագիծը՝ մէկու-կէս կանգուէէն կէս մատնաչափ պակաս։ Ըստ աւանդութեան՝ ասի-կա Ս. Կիւրեղի մկրտարանը եղած է, որուն մէջ Ս. Խաչի երեւման օրը՝ մեծ բազմութիւն մը մկրտութեան կնիքը ընդունեցաւ, կամ՝ հա-